նոյնը ընդօրինակած է նաեւ Բեթղեհէմի Ս. Ծննդեան վանքին մէջ Հաւաքածոյ մը ինչպէս յայտնի է հետեւեալ ոտանաւորէն.

«Զեռս երթայ դառնայ ի հող,
Գիրս մնայ յիշատակող.
Զձեզ աղաչեմ, ով ընթերցող,
Վասն իմ առ Տէր լինիք մաղթող,
Զի յոյժ տապատոչոր սրտիւ գրեցի զգիրքս ի Ս. Ծնունդն»։ (Էջմ. Ցուց. թ. 1675)։ Նոյն ձեռագիրը ունի նաեւ սա յուշագրութիւնները. «Արդ աղաչեմ զամենեսեանդ, որք հանդիպիք այսմ տառիս, մի ողորմեսիւ յիշել ի Տէր զԹորոս եպիսկ...։ Այլ և զծրօղս զԹորոս եպս. կրկնակի ժտելով հայցեմ եւ խնդրեմ մի հայր մեղայիւ յիշեցէք զբաղմամեղս, զի մեծաւ տառապանօք ծրեցի զսա ի Ս. Ծնունդն. յաղագս նախանձու յեղբարց իմոց. զոր արարին ընդ իս ի Գահայ մեծի Ս. Յակոբայ Տեառնեղբօրն, զի խորհեցան չար և գուբ փորեցին ազգի ազգի. եւ մատնելով առ ումեմն Հիպիտոր, անխել եւ անոպայ եւ նախանձով վառեալ, զի երկրորդ դատ և դատաստան արարին ի վերայ իմ. մինչ մեք անյոյս եւ անօգնական լինելով ամենեցունց՝ եկի աստ. ըստ այնմ որ ո՛չ էր որ օգնէր ինձ. կամ թէ եղէ ես առանց օգնականի. զոր տէր Աստուածն ամենայնի հատուսցէ նոցա աստ ի մարմնի. այլ եւ հանդերձելումն դատ արասցէ ընդիս և ընդ արքայ. զի կարէվէր խոցեալ եղև սիրտ իմ։

Զնուաստ գրիչս Թորոս եպս. և ղծնողս իմ մաղթեմ ի ձէնջ. ով գրակարդաց, յիշեցէք ի Քրիստոս, զի յոյժ տապատոչոր սրտիւ հարեալ, որպէս ի նետէ կարեվէր խոցմամբ ումեմն Հիպիտոր կոչեցելոյ գերեզմանին քրիստոսեան, ի Ս. Ծնունդն, ծրելով իմով ձեռամբս, զի ահէ որդոցն Քանանու մաշեալ լինէր սիրտ իմ. զի ոմն Զըղլու եւ ոմն Աղլու, որ են բ. ազգք ֆիլահ կոչեցեալք, սոքա երկոքեանք տալով պատերազմ ընդ միմեանս ի Բեթղեհէմ գիւղաքաղաքի, գեռ ևս վճարումն չեղև և դոցա պատերազմին, զոր և վերջն բանի նմա է գիտելի. այն որ արար զերկինս և զերկիր ոչնչէ։»

Ձեռագրին վերջը կայ նաեւ հետեւեալը. «Ես տէր Սարգիս զայս գիրքս առի ինձ յիշատակ հոգոյս Թիւն ՌՃԽ և Զ ին (=1697)։ Այս վերջին հաւաքածոյին Ծնունդեան ձառը և Ս. Աստուածածնի գովեստը յօրինած է Առաքել շնորհալից վարդապե-